# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2013թվականի N 19

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2013 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 7 ավագանու նիստի օրակարգը՝

1.Համայնքի 2013 թվականի վարչական և ֆոնդային բյուջեի եկամտային և ծախսային մասերում փոփոխություններ կատարելու մասին.

2.Քաղաքացի Արտաշես Ալանակյանի կողմից վարձակալած համայնքային սեփականություն հանդիսացող 1.33հա ջրային հողը ենթավարձակալության հանձնելու թույլտվություն տալու մասին.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
3. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
4. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2013թվականի N 20-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով ավագանին որոշում է.

**1.Հաստատել համայնքի 2013թվականի վարչական բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարված հետևյալ փոփոխությունները՝**

2013 թվականի վարչական բյուջեի եկամտային մասը ավելացնել 300.0 հազ. դրամով .Տեղական տուրք ՝ շինությունների շինարարության թույլտվության մուտքերի հաշվին.

2013թվականի վարչական բյուջեի ծախսային մասի 8-2-4 Այլ մշակութային կազմակերպությունների հատվածի 4269 հոդվածին ավելացնել 300.0 հազ. դրամ՝ ամանորի կապակցությամբ համայնքի անապահով ընտանիքի երեխաներին նվերներ ձեռք բերելու նպատակով.

**2.Հաստատել համայնքի 2013թվականի ֆոնդային բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարված հետևյալ փոփոխությունները.**

2013 թվականի ֆոնդային բյուջեի եկամտային մասը ավելացնել 1004.0 հազ. դրամով՝ հողի օտարումից մուտքերի հաշվին.

2013 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 6-4-1 Փողոցների լուսավորում հատվածի 5112 հոդվածին ավելացնել 954.0 հազ. դրամով ՝արտաքին էլ. լուսավորության կառուցման աշխատանքների ձեռք բերման նպատակով.

2013 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասի 6-4-1 Փողոցների լուսավորում հատվածի 5134 հոդվածին ավելացնել 50..0 հազ. դրամով ՝արտաքին էլ. լուսավորության կառուցման աշխատանքների նախագծահետազոտական ծախսերի ձեռք բերման նպատակով.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
2. ԹՈՄԱՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
3. ԿՅՈՒՁՈՒԿՅԱՆ ՎԵՐԺ
4. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՄԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2013թվականի N 21

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱՇԵՍ ԱԼԱՆԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1.33 ՀԱ ՋՐԱՅԻՆ ՀՈՂԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության "Հողային օրենսգրքի " 48-րդ հոդվածի 2-րդ կետի և հողի վարձակալի հետ կնքված /05.10.2005թվ ըստ սեղանամատյանի թիվ 2357/ պայմանագրի 4.3 կետ պահանջներով համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին քաղաքացի Արտաշես Ալանակյանի կողմից վարձակալած 1.33 հա ջրային հողը ենթավարձակալության թույլտվություն տալու.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
3. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
4. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ